Ես յետոյ աւելի մօտ ծանօթութիւն ունեցայ այդ տիկնոջ հետ, այն ժամանակ միայն նկատեցի, որ նրա աշխատութիւնները՝ դարման տանելու իր ազգայինների թշուառութիւններին՝ չէին սահմանափակւում միայն այսպիսի մասնաւոր օգնութիւններով, նրա նպատակները շատ ընդարձակ էին, նա ունէր բաւականին հիմնաւոր գաղափարներ՝ տիրող չարիքը բառնալու համար: Այդ գաղափարները զարգացել էին նրա մէջ մասամբ իր անբախտ եւ ճնշեալ դրութիւնից, իսկ առաւելապէս եղբօր ազդեցութիւնից: Նրա յարաբերութիւնները Ասլանի հետ, որպէս երեւում էր, նոր չէր: Այդ ես նկատեցի իսկոյն, երբ նա եղբօր հետ ներս մտաւ մեր սենեակը: Նա մօտեցաւ եւ մի տարապայման համարձակութեամբ, որ խիստ օտարոտի էր յարեմի կնոջ համար, նստեց Ասլանի մօտ եւ, նրա աջը առնելով իր ձեռքերի մէջ, ժպտալով ասաց.

— Ախ, որքան ցանկանում էի քեզ տեսնել... ո՞ւր էիր, ի՞նչ ես այդքան թափառում այդ վանքերում...

— Վանքերն էլ պէտք է տեսնել, — ասաց Ասլանը նոյնպէս ժպտալով, — մեր ժողովուրդը դեռ չէ ազատոել վանքերից...

— Բայց քո դէմ որոգայթներ են լարւում, գիտե՞ս:

— Գիտեմ... եւ հէնց դրա համար ուզում էի տեսնել քեզ:

— Դու մատնոած ես...

— Այդ ես վաղուց սպասում էի:

Տիկինը տոեց Ասլանին մի նամակ, որի կարդալու միջոցին դէմքը բոլորովին այլայլոեցաւ, յետոյ իր սովորական սառնասրտութեամբ հարցրեց.

— Այդ նամակը ինչպէ՞ս ընկաւ քո ձեռքը:

Տիկինը պատմեց, թէ մի քանի օր առաջ փաշայի քարտուղարը բերեց իր ամուսնի մօտ այդ նամակը եւ յանձնեց նրան, փաշայի կողմից պատոիրելով, որ ամէն հնարներ պէտք է գործ դնել, որպէսզի գտնոի նամակի մէջ նկարագրոած անձը: Իսկ տիկինը գաղտնի լսում էր նրանց խօսակցութիւնը եւ իսկոյն հասկացաւ, թէ գործն ումն էր վերաբերում եւ ամուսնու բացակայութեան ժամանակ նրա թղթերի միջից վեր առեց նամակը:

Նամակը գրած էր տաճկերեն լեզոով, նրա բովանդակութիւնը մօտաւորապէս այս էր, թէ սուրբ տիրամօր տօնախմբութեան ժամանակ յայտնոեցաւ մի աբեղայ, որ լեռնային ճգնաւորի կերպարանքով թափառում էր ուխտաւորների մէջ: Յետոյ կեղծ ճգնաւորը, վանեցի վաճառականի ձեւի մէջ մտած, գնաց եզիդիների ցեղապետի վրանը, նրա մօտ մնաց մի ամբողջ օր (եզիդիների ցեղապետը յայտնի թշնամի է կառավարութեան): Այնտեղից